

---

---

**ՀՈԳԵԿԱՆ ԵՎ ՆԱՐԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

---

---

**ԶԵԿՈՒՅՑ**

---

---



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ



Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան

**Զեկույցը կազմեց՝**      **Արահամ Արտաշեայան**  
**Խմբագրեցին՝**      **Արթուր Սաքունց**  
  **Մարիետա Թեմուրյան**

*Սույն զեկույցում առաջին անգամ ներկայացվում է հոգեկան և նարկոլոգիական բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ֆինանսավորման գնահատականը լսու մարդու իրավունքների չափորոշիչների:*

*Զեկույցի հրապարակումն իրականացվել է Բաց Հասարակության Հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ «Կազմակերպության կարողությունների զարգացմանն աջակցություն» ծրագրի շրջանակներում:*

*Զեկույցում արդահայտված տեսակետները, մեկնարանություններն ու եզրահանգումները պարկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:*

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ	4
Բաշխման արդյունավետություն	4
Պլանավորման արդյունավետություն և ծառայության հասանելիություն	6
Տնտեսական արդյունավետություն	8
Թափանցիկություն	16
Եզրակացություններ և առաջարկություններ	17
ՀԱՎԵԼՎԱԾ 1	19
ՀԱՎԵԼՎԱԾ 2	20
ՀԱՎԵԼՎԱԾ 3	44
ՀԱՎԵԼՎԱԾ 4	46

## ՆԱԽԱԲԱՆ

«Երկարաժամկետ հեռանկարի դեսանկյունից չկա հակասություն լրնարեսական աճի, կայունությանն ուղղված միջոցների և առավել խոցելի խնդերի խնամքի ու պաշտպանության ապահովման միջև։ Տնտեսման կոչքը միջոցները, որոնք խթանում են անհավասարությունը խնդիրների լուծումը միայն ապագա կղեղափոխեն, իսկ որոշ ոլորտներում կհանգեցնեն նրան, որ հարկավոր կլինի ավելի շատ միջոցներ ծախսել այդ խնդիրների լուծման ուղղությամբ երկարաժամկետ հեռանկարում։

Խաղաքարտին դրված են ընդհանուր արդարության և սոցիալական համախմբվածության կարևորագույն արժեքները...»

### Թռոմաս Համմարբերդ

«Իմք ընդունելով <<Սահմանադրության 1-ին, 38-րդ հոդվածները, 48-րդ հոդվածի 4-րդ կետը և 89-րդ հոդվածի 5-րդ կետը, «Հոգեբուժական օգնության մասին», «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին», «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» <<օրենքները, «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» 2004 թ. մարտի 4-ի N 318-Ն, «Հոգեբուժական օգնության և սպասարկման տեսակների ցանկն ու կառուցվածքը հաստատելու մասին» 2010 թ. ապրիլի 1-ի N 350-Ն <<Կառավարության որոշումները՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը նախաձեռնել է սույն ուսումնասիրությունը՝ պարզելու հոգեբուժական և նարկոլոգիական ծառայությունների տրամադրման առումով պետության՝ նշված օրենսդրությամբ ստանձնած պարտավորությունների կատարումը, այդ ծառայությունների տրամադրման առկա ծավալների համապատասխանությունը հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը, հոգեբուժական և նարկոլոգիական ծառայությունների ֆինանսական կառավարման արդյունավետությունը և ծառայությունների մատուցման թափանցիկությունը։ Այն լույս կսփռի հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց իրավունքների իրականացման խնդիրներին և կզնահատի հանրային ֆինանսների ծախսման արդյունավետությունը և թափանցիկությունը նշված բժշկական ծառայությունների մատուցման ժամանակ։

Ուսումնասիրության իրականացման համար դիտարկվել են՝

- **բաշխման արդյունավետությունը՝** շեշտադրելով հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական ծառայությունների տրամադրմանը հատկացվող ֆինանսական միջոցների մակարդակը այլ բժշկական ծառայությունների համեմատությամբ,

- **պլանավորման արդյունավետությունը՝** ոլորտի համար սահմանված նպատակների և խնդիրների լուծման համար պլանավորվող ֆինանսական միջոցները, դրանց համապատասխանությունը իրավական ակտերին

- **տնտեսական արդյունավետությունը՝** առանձին նյարդահոգեբուժական բուժիաստատությունների կողմից պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսման արդյունավետությունը,

- **ծառայությունների հասանելիությունը՝** բժշկական օգնության կարիք ունեցող անձանց ծառայություններից օգտվելու հնարավորությունը,

- **թափանցիկությունը՝** տեղեկատվության հասանելիությունը և քաղաքացիական վերահսկողության հնարավորությունները։


### Բաշխման արդյունավետություն

Հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ֆինանսավորումը դիտարկելով բաշխման

արդյունավետության տեսակետից՝ նախ և առաջ ուսումնասիրվել և հստակեցվել է ծառայությունների առաջնահերթության մակարդակը այլ ծառայությունների համեմատությամբ: << առողջապահության նախարարության պաշտոնական կայքում հրապարակված ազգային առողջապահական ծրագրերի շարքում հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների գծով ծրագրեր առկա չեն<sup>1</sup>: Ծրագրերի շարքում են << տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը, Ինունականիսարգելման ազգային ծրագիրը, Վերարտադրողականության վերականգնման ազգային ծրագիրը, <<-ում ծխելու դեմ պայքարի 2010-2015 թթ. պետական ծրագիրը, Առավել բարձր մահացության բերող երեք հիվանդությունների (արյան շրջանառության համակարգի, չարորակ նորագոյացությունների և շաքարային դիաբետի) ազգային ռազմավարական ծրագրերը, <<-ում մալարիայի ներբեռնումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թթ. պետական ծրագիրը: Սույնով պետությունը սահմանում է, որ << կառավարության համար Նշված ծրագրերը առավելություն ունեն: << Եթևաբար այս ուղղություններով պետք է պետական բյուջեից զգալի ֆինանսական միջոցներ հատկացվեն:

Պետական բյուջեում «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» տողը ներառված է «Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ» ենթաբաժնում: Նշված ենթաբաժնում դրա տեսակակար կշիռը 22% է: Մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների տեսակարար կշիռները և բյուջետային տողերը ներկայացված են գծապատկեր 1-ում:

**Գծապատկեր 1. «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» հոդվածի տեսակարար կշիռը «Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ» ենթաբաժնում**



<sup>1</sup> [http://moh.am/?section=static\\_pages/index&id=215](http://moh.am/?section=static_pages/index&id=215)

Գծապատկերից երևում է, որ պետական բյուջեից հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների մյուս մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների համեմատությամբ զգալի միջոցներ են տրամադրվում (միջինը 25%), որը գերազանցում է և տուրերկույզի բժշկական օգնության (միջինը 18%), և ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին (միջինը 16%):

Հարկ է նաև նշել, որ հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց թիվը նույնպես զգալի է (տե՛ս աղյուսակ 1):

### **Աղյուսակ 1. Առաջին անգամ բացահայտված ախտորոշումով գրանցված պացիենտների թվաքանակը ըստ հիվանդությունների<sup>2</sup>:**

Հիվանդությունը	2008	2009	2010	2011
Չարորակ նորագոյացություններով	7336	7657	7593	7858
Սուր աղիքային վարակներ	5767	5666	7506	7893
Հոգեկան խանգարումներով	2495	2689	3584	2956
Ակտիվ թոքախտով	1486	1431	1322	1182
Վեներական հիվանդություններով	716	726	588	535
Ալկոհոլիզմով և թմրամոլությամբ	666	595	616	506

Ինչպես երևում է աղյուսակից, տարվա ընթացքում առաջին անգամ բացահայտված հոգեկան խանգարումներով անձանց թիվը 2008 թ. 2549 է, 2009 թ.՝ 2689 և 2010 թ.՝ 3584: Ընդհանուր առմամբ 2011 թ. դրությամբ << բուժհաստատություններում հաշվառված են **45,116**<sup>3</sup> հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձններ, որը 2010 թ. համեմատ նվազել է 1041-ով: Ալկոհոլով և թմրամոլությամբ տառապող անձանց թիվը 2008, 2009 և 2010 թթ. համար համապատասխանաբար 666, 595 և 616 է:

Բերված վիճակագրությունը վկայում է, որ հոգեկան և նարկոլոգիական ծառայությունները լուրջ ուշադրության կարիք են պահանջում: Մինչդեռ ոլորտում ռազմավարության հստակ ծրագրերի բացակայությունը խոչընդոտում է առկա խնդիրների հետևողական լուծմանը և նվազեցնում բաշխման արդյունավետությունը: Այս պայմաններում, չնայած ծախսերի մեծ տեսակարար կշռին, ընդհանուր «Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ» ենթարածմից անհնար է դատել, թե արդյոք առկա ֆինանսական միջոցները բաշխվում են առավել արդյունավետ՝ պահովելով սոցիալական արդարություն, մասնավորապես հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բուժվելու իրավունքի իրականացումը:

### **Պլանավորման արդյունավետություն և ծառայության հասանելիություն**

Պետությունը օրենսդրությամբ երաշխավորում է հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից, ալկոհոլից կախվածություն ունեցող անձանց անվճար բժշկական օգնության տրամադրումը: Այդ նպատակով ամեն տարի պետական բյուջեով պլանավորվում են համապատասխան ֆինանսական միջոցներ, որոնք ապահովում են նշված ծառայությունների անվճար տրամադրումը: Բուժհաստատություններն իրենց մատուցած ծառայությունների համար փոխհատուցվում են պետական բյուջեից՝ նշված ֆինանսական միջոցների հաշվին՝ ըստ սահմանված կարգի: Մասնավորապես, կառավարության 2004 թվականի N318-Ն «Պետության կողմից անվճար բուժօգնության և սպասարկման մասին» որոշումը սահմանում է բժշկական կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման ֆինանսավորման և փոխհատուցումների կարգը: Սույն որոշմամբ նշված

<sup>2</sup> Առողջապահություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք -2012


<sup>3</sup> Առողջապահություն, Հայաստանի վիճակագրական տարեգիրք -2011, էջ 170

բժշկական ծառայությունները մատուցվում են սահմանափակված բյուջեի սկզբունքով, երբ ֆինանսավորումն իրականացվում է փաստացի կատարված աշխատանքների դիմաց, սակայն ոչ ավելի, քան կազմակերպության և <այաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորումն իրականացնող կամ նրա կողմից լիազորված մարմնի միջև (այսուհետ՝ պատվիրատու) կնքված՝ <այաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բժշկական օգնության և սպասարկման իրականացման ու փոխհատուցման մասին պայմանագրով սահմանված գումարը<sup>4</sup>:

2009, 2010, 2011 և 2012 թթ. պետական բյուջեով առողջապահությանը հատկացվել են համապատասխանաբար 64,078,138.30 (փաստացի կատարվել է 55,565,752.8), 55,011,287.3 (փաստացի կատարվել է 55,869,518.1), 62,103,273.90 (փաստացի կատարվել է 62,893,709.84) և 65,126,483.3 (փաստացի կատարվել է 64,498,957.0) << դրամ:

#### **Գծապատկեր 2. Առողջապահական ծախսերը 2008-2012 թթ.**


(հազ. դրամ)



Կատարված առողջապահական ընդհանուր ծախսերի մեջ հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից, ալկոհոլից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնության և խնամքի ծառայություններին հատկացվել է 2008 թ.՝ 1,535,860.70, 2009 թ.՝ 1,761,442.80, 2010 թ.՝ 1,619,869.60, 2011 թ.՝ 1,786,155.00 և 2012 թ.՝ 1,886,155.40 հազար դրամ:

#### **Գծապատկեր 3. Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ծախսերը 2008-2012 թթ.**

(հազ. դրամ)



Ըստ տարիների համադրելով պլանային հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ծախսերը ընդհանուր առողջապահության պետական բյուջեի հետ՝ հստակ երևում է, որ նշված ծառայությունների մատուցման ծավալները կախված է առողջապահական բյուջեի մեծությունից՝ մոտ 2.8% տարեկան:

<sup>4</sup> << կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 643-Ն որոշում, 2 կետի 1)-ին ենթակետ

**Այլուսակ 2.Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունների ծախսերը ընդհանուր առողջապահության պետական բյուջեի մեջ**

Տարի	Առողջապահության բյուջե (պլանային)	Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ	Ծախսը ընդհանուր բյուջեի մեջ (%)
2008	53,407,287.10	1,535,860.70	2.88%
2009	64,078,138.30	1,761,442.80	2.75%
2010	55,011,287.30	1,619,869.60	2.94%
2011	62,103,273.90	1,786,155.00	2.88%
2012	65,126,483.30	1,886,155.40	2.90%

Հետևաբար կարելի է պնդել, որ հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունները պահպանվում են և հասանելի են տվյալ տարրվա բյուջեի մեջության չափով, այլ ոչ նախորդ տարրվա ընթացքում փաստացի կատարված ծախսերի հիման վրա: Նշվածը հակասում է Կառավարության N318-Ն որոշման <ավելված 2-ի «Ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման» կարգի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և ֆինանսավորման սկզբունքների» 2 կետի 2) ենթակետին, այն է՝ կազմակերպությունների սահմանափակված բյուջեի ծավալները հիվանդանոցային բուժօգնության մասով որոշվում են նախորդ տարրում փաստացի ֆինանսավորված գումարի, գների բարձրացման և դեպքերի ավելացման նպատակով նախատեսված գումարի համրագումարով:

Հաշվի առնելով նշված օրենքի պահանջը և գնաճի ինդեքսները 2008-2012 թթ. համար (համապատասխանաբար 109.0, 103.4, 108.2, 109.0, 102.6)<sup>5</sup> կարելի էր ակնկալել նաև «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» հոդվածի առնվազն անցած տարիների մակարդակի պահպանումը: Սակայն, ինչպես երևում է բերված այլուսակից, ծախսերը աճում են 2009 թ., նվազում՝ 2010 թ. ու կրկին աճում 2011 և 2012 թթ. և աճի տեմպը զիջում է գնաճի տեմպերին:

Ենթադրել, որ 2010 թ. հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից, ալկոհոլից կախվածություն ունեցող անձանց թիվը զգալի կրծատվել է, անհիմն է: Վերը բերված այլուսակ 1-ում երևում է, որ և 2009 թ., և 2010 թ. հիվանդության գրանցման դեպքերը աճել են: Աճել է նաև ընդհանուր հաշվառված անձանց թիվը (հոգեկան հիվանդությունների գծով 2008 թ.՝ 42961 մարդ, 2009 թ.՝ 44397, 2010 թ.՝ 46157): Ակնհայտ է, որ ֆինանսների կրծատման պատճառով համապատասխանաբար կրծատվել է մատուցված ծառայությունների որակը կամ սպասարկվողների թիվը՝ մեխանիկական բացառման եղանակով, երբ սահմանվում են ընդգրկման առավել խիստ չափանիշներ: Նշված պայմաններում ծառայության հասանելիությունը նույնականացնելու համար կատարված է, երբեմն էլ չարաշահումների պատճառ համովանում, երբ ծառայություններ ստացողները ստիպված են լինում հավելյալ վճարներ կատարել կամ փնտրել այլ հնարավորություններ ծառայություններից օգտվելու համար<sup>6</sup>:

### **Տնտեսական արդյունավետություն**

Տնտեսական արդյունավետությունը այն ցուցանիշն է, որով գնահատվում է առկա ֆինանսական միջոցների օգտագործումը: Տնտեսապես արդյունավետ է այն ծառայություն մատուցողը, որը

<sup>5</sup>Հայաստանի վիճակագրական տարեգիրը - 2012

<sup>6</sup><http://www.panorama.am/am/law/2012/02/07/klinika/>

մատուցում է նույն ծառայությունը ավելի փոքր ծախսերով: Այստեղ կարևոր է ոչ միայն ծառայության մատուցման արդյունավետ միջոցների օգտագործումը (անհրաժեշտ ապրանքներ, բավարար աշխատուժ, էժան կապիտալ, նոր տեխնոլոգիա), այլ նաև ծառայության մատուցման ժամանակ ընտրված միջոցների արդյունավետ զուգակցումը: Օրինակ՝ սարքավորումներ, որոնք համապատասխանում են բժիշկների որակավորմանը:

Առկա ֆինանսավորման ձևերի պայմաններում նյարդահոգերուժական բուժհաստատություններն իրենց ֆինանսական հոսքերը կառավարում են ինքնուրույն: Պետությունը ֆինանսավորում է սահմանված դյույքների համաձայն՝ պացիենտ (օր, մահճակալ) օրով, դեպքերով և այլ հետևյալ դրույքաչափերով.

### **Այլուսակ 3. Բժշկական օգնության և ծառայությունների միավորների գները ըստ տեսակների<sup>7</sup>**

	Ծառայությունների անվանումը	Միավոր ծառայության գինը				
		2008	2009	2010	2011	2012
0301309 0301309	Քրոնիկ հոգեկան հիվ. (Երկարատև ընթ. զառանց. խանգարում, քրոնիկ հայլուցինոզ) սրացման բուժում (մեծ)	x8	x	5,350	5,900	5,900
0301311	Հոգերուժական՝ սուր դեպքերի բուժում (մեծ)	4,950	5,350	5,350	5,900	5,900
0301312	Հոգերուժական հարկադիր բուժում (մեկ մահճակալ օրվա գինը) (մեծ)	4,950	5,350	5,350	5,900	5,900
0301313	Դատահոգերուժական փորձաքննություն (մեծ)	4,950	5,350	5,350	5,900	5,900
0301314	Քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք (մեկ մահճակալ օրվա գինը) (մեծ)	3,150	3,400	3,400	3,750	3,750
0301315	Դատահոգերուժական /դատաքշշկական/ փորձաքննություն ամբողջատոր	-9	-	-	3,750	3,750
0301315* (2011-ից)	Հետազոտում հիվ. պայմաններում ախտորոշման նպատակով (հոգերուժ., մեծ)	x	x	X	3,750	3,750
0301340	Նարկոլոգիական հիվանդների բուժում (մեծ)	5,560	6,000	6,000	6,600	6,600
0301341	Նարկո. հետազոտում հիվանդ. պայմաններում ախտ. նպատակով (մեծ)	5,560	6,000	6,000	6,600	6,600
0301342	Նարկոլոգիական հիվանդների բուժում (մեծ) /<< մարզեր/	5,560	6,000	6,000	6,600	6,600
0301343	Նարկոլոգիական հիվանդների բուժում ցեր. ստացիոնարում (մեծ)	2,224	2,400	2,400	2,640	2,640
0301421	Նկրողների և այլ սահմանային վիճակների (մեծ) /ցերեկային ստացիոնարում	-	-	-	-	-
0301454	Զորակոչիկների փորձաքննություն՝ հիվ. պայմաններում (հոգեր.)	4,950	5,350	5,350	5,900	5,900
0301474	ԲՍՓՀ հետազոտում՝ հիվանդանոցային պայմաններում (հոգ.)	4,950	5,350	5,350	5,900	5,900
0601298	Հետազոտում ախտորոշման ծշտման նպատակով (հոգերուժ.)	x	x	X	3,750	3,750
0601299	Քրոնիկ հոգեկան հիվ. (Երկարատև ընթ. զառանց. խանգարում, քրոնիկ հայլուցինոզ)	x	x	5,350	5,900	5,900
0601301	Հոգերուժական սուր դեպքերի բուժում	4,950	5,350	5,350	5,900	5,900
0601302	Հոգերուժական հարկադիր բուժում (մեկ մահճակալ օրվա գինը)	4,950	5,350	5,350	5,900	5,900
0601303	Դատահոգերուժական փորձաքննություն	4,950	5,350	5,350	5,900	5,900

<sup>7</sup> Համաձայն նյարդահոգերուժական բուժհաստատություններից ստացված տեղեկատվության (տես հավելված 2)

<sup>8</sup> «X»- ով նշված ծառայությունները համապատասխան թվականին բացակայել են կամ ընդգրկված չեն եղել պետության կողմից անվճար բժշկական օգնության և ծառայությունների ցուցակում

<sup>9</sup> «-» -ով նշված ծառայությունների համար պետության հետ կնքված պայմանագրերում ֆիքսված չեն

0601304	Քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք (մեկ մահճակալ օրվա գինը) (մեծ)	3,150	3,400	3,400	3,750	3,750
0601320	Նարկոլոգիական հիվանդների բուժում	5,560	6,000	6,000	6,600	6,600
0601321	Նարկո. հետազոտում հիվանդ. պայմաններում ախտ. նպատակով	5,560	6,000	6,000	6,600	6,600
0601322	Նարկոլոգիական հիվանդների բուժում (մեծ) /ՀՀ մարզեր/	5,560	6,000	6,000	6,600	6,600
0601454	ԲՍՓՀ հետազոտում՝ հիվանդանոցային պայմաններում (հոգ.)	4,950	5,350	5,350	5,900	5,900

Նշված ծառայությունների ցանկը հանրագումարային է. դրանցից միայն որոշներն են մատուցվում կոնկրետ բուժիաստատության կողմից և պարտադիր չեն, որ բոլոր բուժիաստատությունները մատուցեն ցուցակում նշված ծառայությունները: Օրինակ՝ «Նարկոլոգիական հետազոտում հիվանդանոցային պայմաններում ախտորոշման նպատակով (մեծ)» (կոդ 0301341) ծառայությունը տրամադրվում է <<ԱՆ Հոգեբուժական բժշկական կենտրոնի և Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի կողմից:

Հատկանշական է, որ դիտարկվող ժամանակահատվածի համար զգալի ընդլայնվել է մատուցվող ծառայությունների ցանկը: Այս հանգամանքը կարելի է գնահատել երկակի: Մի կողմից, ավելացված ծառայությունները բազմազան ծառայությունների միջոցով հնարավոր են դարձնում ավելի արդյունավետ սպասարկել բնակչությանը, մյուս կողմից ցանկի ավելացումը ֆինանսները ավելի նպատակային են դարձնում, նվազում է բուժիաստատությունների ինքնուրույնությունը և ձկունությունը ծառայությունները մատուցելու համար: Այս դեպքում բուժիաստատությունները կարող են սպասարկել միայն կոնկրետ հիվանդություններով՝ սահմանված քանակով անձանց՝ ըստ պայմանագրում նշված քանակների:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, մատուցվող ծառայությունների ավելացումը կատարվում է նախկին ծառայությունների ֆինանսների խնայողությունների/կրծատման հաշվին: Ավելացված ծառայությունները «կլանում» են նախկինում մատուցվող ծառայությունների ֆինանսները: Ուստի 2008-2012 թթ. ընթացքում ֆինանսների ավելացման դրական տենդենցը կարելի է վերագրել ծառայությունների քանակական աճին՝ նախկինում մատուցվող ծառայությունների ֆինանսների հաշվին, ինչպիսի պայմաններում ծառայությունների որակի խնդիրը մնում է վիճահարուց:

Համեմատելով ծառայությունների գները ըստ բուժիաստատությունների՝ կարելի է փաստել, որ դրանց գներն համընդիանուր են: Միավոր ծառայությունների գները ուսումնասիրված բոլոր հիմնարկների համար նույն է եղել: Թերևս ուշադրության արժանի է 2009 թվականի ընթացքում կատարված գների փոփոխությունը: << առողջապահության նախարարությունը 2009 թ. սեպտեմբերին վերանայել է նյարդահոգեբուժական բուժիաստատությունների հետ կնքված պայմանագրերը և բարձրացրել ծառայությունների գները: Ենթադրվում է, որ ֆինանսական տարվա 9-րդ ամսվա դրությամբ ծառայությունների վերազնահատումը բնավ չի մատնանշում ոլորտում պլանավորված պետական քաղաքականության իրականացումը:

Ընդհանրապես ծառայությունների գների սահմանման մեխանիզմները քիչ հիմնավորված են: Առողջապահության նախարարության գրության համաձայն /տես՝ հավելված 3/ գները հաստատվում են սահմանված գործակիցների և համապատասխանեցվում << ֆինանսների նախարարության հետ:

Պայմանագրերում ծառայությունների գների մասով առկա են մի շարք թերություններ ևս: Օրինակ՝ «Դատահոգեբուժական /դատարքշէկալական/ փորձաքննություն ամբուլատոր» ծառայության կոդը 0301315 է, 2011 թվականից ավելացել է նաև «Հետազոտում հիվ. պայմաններում ախտորոշման նպատակով (հոգեբուժ., մեծ)» ծառայությունը, որը նույնպես նույն կողի տակ է, միավորի գին կամ միավորի օրական գին սյուները համապատասխան պայմանագրերում բացակայում են կամ 0 են և այլն:

Մանրամասն ուսումնասիրվել է առանձին բուժիաստատությունների կողմից կատարված ծախ-

սերը: Ծախսերը ուսումնասիրվել են ըստ

1. բուժհաստատությունների և << առողջապահության նախարարության հետ կնքված պայմանագրերի,
2. բուժհաստատություններից ստացված ֆինանսական տվյալների /տե՛ս հավելված 2/:


Պայմանագրերի ուսումնասիրման ժամանակ պարզվել է, որ բուժհաստատությունները հոգեբուժական/նարկոլոգիական ծառայություններ մատուցելու համար ֆինանսավորվում են ըստ սպասարկվող ազգաբնակչության թվի: Սակայն, օրինակ՝ << ԱՆ Հոգեբուժական բժշկական կենտրոնի հետ 2010 թ. կնքված պայմանագրում սպասարկվող ազգաբնակչությունը 868,991 հոգի է: Մինչդեռ նշված բուժհաստատությունը սպասարկում է ամբողջ Երևան քաղաքը և ըստ << Ազգային վիճակագրական ծառայության միայն Երևանի մշտական բնակչությունը 2010 թ. կազմել է 1116.6 հազար մարդ<sup>10</sup>: << առողջապահության նախարարությունից ստացված գրությունը պարզաբանում է, որ նշված թիվը Երևանի չափահաս ազգաբնակչության թիվն է: Սակայն, << առողջապահության նախարարի 31.01.2012 N 139-Ա հրամանի հավելվածի II գլխի 1-4 կետերում չափահասների հետ նշվում է նաև անչափահասների սպասարկումը: << Նարաւոր է, որ այս դրույթը գործում է սկսած 2012 թ., սակայն նաև 2012 թ. ազգաբնակչության թիվը պայմանագրում նշված է 885,220 (ըստ վիճակագրության տվյալների 1127.3 հազար մարդ)<sup>11</sup>:

Արտահիվանդանոցային ծառայությունների ֆինանսավորման պարագայում առկա է խորական մոտեցում մարզերի և Երևանի միջև: Այսպես, ըստ << ԱՆ Հոգեբուժական բժշկական կենտրոնի հետ կնքված պայմանագրերի՝ 2009 և 2010 թթ. 1 շնչին ընկնող հոգեբուժական/նարկոլոգիական ծառայության գումարը կազմել է 114 դրամ, իսկ 2011 և 2012 թթ.<sup>12</sup>՝ 125 դրամ: Մեկ շնչին ընկնող հոգեբուժական/նարկոլոգիական ծառայության համար մարզային բուժհաստատություններին 2009 և 2010 թթ. տրամադրվել է 64 դրամ, իսկ 2011 և 2012 թթ.<sup>13</sup>՝ 70 դրամ:

Պայմանագրերում նշված գումարների ուսումնասիրության հատկանշական փաստ է նաև բուժհաստատությունների կողմից հնարավորությունների ոչ լրիվ օգտագործումը: Խոսքը գնում է 10% գերածախսի մասին, ինչը նախատեսված է օրենսդրական ակտերով և նշված է պայմանագրում որպես առավելագույն գումար: Սակայն ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, բուժհաստատությունները երբեմն նույնիսկ ամրողությամբ չեն օգտագործում գումարները, իսկ առավելագույն գումարների շեմը անցնում են միայն << ԱՆ Հոգեբուժական բժշկական կենտրոնը և Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերը<sup>14</sup>:

Բուժհաստատություններից ստացված ֆինանսական տվյալների հիման վրա կատարված ուսումնասիրության արդյունքները հետևյալն են.

#### Գծապատկեր 4ա. Բուժհաստատությունների ծախսերը 2008-2012 թթ.




<sup>10</sup> [http://armstat.am/file/article/armenia\\_17.pdf](http://armstat.am/file/article/armenia_17.pdf), էջ 104

<sup>11</sup> [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_11a\\_520.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_11a_520.pdf), էջ 130


<sup>12</sup> Մանրամասն տվյալները բերված են հավելված 1-ում

## Գծապատկեր 4բ. Բուժհաստատությունների ծախսերը 2008-2012 թթ.




Նյարդահոգեբուժական բուժհաստատությունների ծախսերը կատարվում են հետևյալ հիմնական ծախսային ուղղություններով.


## Գծապատկեր 5. Նյարդահոգեբուժական բուժհաստատությունների ծախսերի կառուցվածքը



**2011**




**2012**



Ծախսերի կառուցվածքից հստակ երևում է, որ բուժհաստատությունները զգալիորեն տարբերվում են ծառայությունների մատուցման համար «լավագույն» զուգակցումը կառուցելիս: Սակայն բերված թվերից հետևություն անել, թե որ բուժհաստատությունն է առավել արդյունավետ, անհնար է:


Մասնավորապես ուսումնասիրված ծախսային հոդվածներով ստացվել են հետևյալ արդյունքները՝ աշխատավարձի գծով 2011 թ. դիտարկվել է առավելագույն 63.9% և նվազագույն 28.7% տեսակարար կշիռները դիտարկված բոլոր բուժհաստատությունների համար: Ստացվում է, որ բուժհաստատություններից մեկում բուժանձնակազմի առկա քանակը կամ համապատասխան վարձատրությունն է դիտվում որպես հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից, ալկոհոլից կախվածություն ունեցող անձանց խնամքի և բուժման «գերադասելի» զուգակցումը, մեկ այլ հաստատությունում՝ դեղամիջոցների առկայությունը: Ստորև բերված են ըստ հոդվածների տեսակարար կշիռների առավելագույն և նվազագույն ցուցանիշները:

**Գծապատկեր 6ա. Նյարդահոգեբուժական բուժհաստատությունների ծախսերի առավելագույն և նվազագույն մեծությունները**



Նման շեղումներ առկա են նաև դեղորայքի վրա ծախսված ֆինանսների տեսակարար կշիռների կտրվածքով:

#### **Գծապատկեր 6թ. Նյարդահոգեբուժական բուժհաստատությունների ծախսերի առավելագույն և նվազագույն մեծությունները**




Հետաքրքրական է 30.3% ընդհանուր ծախսերի մեջ դեղորայքի տեղակարար կշիռը 2010 թ.: << առողջապահության նախարարությունից և նյարդահոգեբուժական բուժհաստատություններից ստացված տեղեկությունից /տես հավելված 4/ պարզ է դառնում, որ նշված տարվա ընթացքում դեղորայքի ծախսի մեջ լինելը պայմանավորված է Մարդասիրական Օգնության Հումանիտար Կենտրոնի կողմից տրամադրված անվճար դեղորայքով, որի ընդհանուր գումարը կազմել է 939,927.5 հազ. դրամ և տվյալ բուժհաստատության ընդհանուր դեղորայքի վրա ծախսված գումարը կազմել է 1,084,016.0: Նշենք, որ 2009 թ. այդ գումարը կազմել է 385,435.0, իսկ 2011 թ.՝ 425,160.0: Ստացվում է, որ մեկ տարվա ընթացքում ծախսվել է 2.5-3 անգամ ավելի շատ դեղորայք, քան տարեկան միջինն է: Դեղորայքի վրա ծախսված հավելյալ գգալի միջոցները ցույց են տալիս, որ Հայաստանում հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից, ալկոհոլից կախվածություն ունեցող անձանց պատշաճ ուշադրություն չի դարձվում համենայն դեպքում դեղորայքով ապահովման տեսանկյունից: Հետևաբար ոլորտում հաշվառված անձանց 1/3-ն է միայն ապահովված դեղորայքով, կամ տվյալ անձինք ստանում են միայն իրենց բուժման համար անհրաժեշտ դեղորայքի 1/3-ը և դեղորայքի մյուս մասը գնվում է անձի հնարավորությունների սահմաններում: Մինչդեռ պետությունը երաշխավորում է նման հիվանդությունների անվճար բուժումը և համապատասխան դեղորայք չտրամադրելը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում:

Այլ ծախսային հողվածների առումով պատկերը նույնն է: Սանդի պարագայում տեսակարար կշիռները տատանվում են 31.8%-ից 8.5%<sup>13</sup>:


<sup>13</sup> 2012 չի նշվել, քանզի տվյալները ամբողջ տարվա համար ներկայացված չեն:

**Գծապատկեր 6գ. Նյարդահոգեբուժական բուժիաստատությունների ծախսերի առավելացույն և նվազագույն մեծությունները**



Մնացած չրասակարգված ծախսերի տեսակարար կշիռները տատանվում են 33.3%-ից 10.3%:

**Գծապատկեր 6դ. Նյարդահոգեբուժական բուժիաստատությունների ծախսերի առավելացույն և նվազագույն մեծությունները**



Բերված ցուցանիշների հիման վրա հետևողական անելն անհնար է, քանզի բացակայում են ծառայության գնահատման հստակ չափորոշիչներ կամ մատուցված ծառայությունների որակի բավարարվածության գնահատման մեխանիզմներ: Այս պարագայում պնդել, որ միավոր ծառայության վրա կատարված ցածր աշխատավարձի ծախսերը արդյունավետ է, անհիմն է, քանի որ աշխատավարձի ֆոնդի բարձր լինելը, տեսականորեն<sup>14</sup>, նշանակում է ավելի որակյալ աշխատանքի իրականացում: Եվ հակառակը, դեղորայքի բարձր գները կարող են հետևանք լինել ավելի որակյալ դեղորայքով բուժման իրականացման: Սակայն բերված թվերի գգալի տարրերությունը լուրջ մտուրումների տեղ է տալիս և ակնհայտ դարձնում ծառայությունների որակի համապատասխանության վերաբերյալ համապատասխան մարմինների ստուգումների անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է նաև հատուկ մեթոդական ուղեցույցների պատրաստումը և տրամադրումը բուժիաստատություններին՝ ծախսային քաղաքականության թափանցիկ իրականացման և հաշվետվողականության բարձրացման համար:

Ստացված ֆինանսական տվյալների հիման վրա հաշվարկվել է նաև մեկ անձ/օր/դեպք միջին ծախսը ըստ տարիների:

<sup>14</sup> Գործնականորեն դժվար է ասել, թե արդյոք բուժանձնակազմը առավել հետևողական է իր պարտականությունների կատարմանը բարձր աշխատավարձի դեպքում:

#### **Այլուսակ 4. Մեկ անձ/օր/դեպք վրա կատարված միջին ծախսը**

	2008	2009	2010	2011	2012
Ընդամենը բուժման օրերի/դեպքերի քանակը	416,134	426,047	343,447	407,962	214,182
Ծախսված միջոցներ*	2,112,188	2,290,458	2,964,249	2,559,670	1,295,348
Միջին ծախս օր/դեպք*	5.08	5.38	8.63	6.27	6.05

\* հազար դրամներով

Ինչպես երևում է այլուսակից, միջին ծախսերը օրերի/դեպքերի համար ըստ տարիների խիստ տատանվում է: Առավել հետաքրքիր է 2010 թ. 8.63 հազար դրամ ցուցանիշը: Վերը բերված այլուսակ 3-ում բոլոր ծառայությունների արժեքները փոքր են 8000-ից, ինչից հետևում է, որ միջին ծառայության ծախսը նույնական այդ թվից պետք է լինի: Սակայն ստացված ցուցանիշի մեջ լինելը վկայում է, որ ծառայությունների իրական գները ավելի բարձր են, քան փոխհատուցվում են, կամ բուժհաստատությունները ներգրավում են հավելյալ միջոցներ (հնարավոր է նաև ծառայություններից օգտվողներից), կամ ոչ ճիշտ է վարվում հաշվառումը:

Բուժհաստատություններից ստացված տեղեկատվության հիման վրա պարզ է դառնում նաև, որ հիմնարկներում դժվարություններ կան կապված ծախսերի դասակարգման հետ: <Հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծախսերը հաճախ դժվարանում են առանձնացնել և պատճառաբանում, որ բուժհաստատությունը մեկ իրավաբանական անձ է և հետևաբար հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների հաշվապահական հաշվառումը վարվում է միասին: Նման պարզաբանումը արդարացված կլինիկ, եթե պետության հետ պայմանագիրն էլ չառանձնացներ հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններին հատկացվող միջոցները:

Ֆինանսավորման առկա համակարգը տնտեսական արդյունավետության մեջ այլ խնդիր է հանգեցնում: Ուսումնասիրելով ծախսային հոդվածները՝ հեշտ է նկատել, որ կատարված ծախսերը ընթացիկ են: Ծախսային մասում բացակայում են կապիտալ ծախսերը: Կապիտալ ծախսերի բացակայությունը հանգեցնում է շենքային պայմանների անմիտար վիճակին, մաշված հիմնական միջոցների, հնացած սարքավորումների և այլն: Նման պայմաններում արդյունավետ և նույնիսկ որակյալ ծառայություն մատուցելն անհնարին է: Ուստի, հաշվի առնելով նման ծախսերի մեծությունները և այսօրվա հնարավորությունը՝ խնդիր է առաջանում այլընտրանքային տարբերակների ներդրումը՝ բնակչությանը պատշաճ որակի ծառայություններ մատուցելու համար:

#### **Թափանցիկություն**

Նյարդահոգերութական բուժհաստատությունների կողմից մատուցված ծառայությունների ֆինանսավորման և փոխհատուցումների մասին տեղեկատվությունը սահմանափակ է: Իրավական տեսանկյունից օրենսդրությունը հստակ ձևակերպում է ֆինանսական փոխհարաբերությունները ծառայություններ մատուցողի և ֆինանսավորողի միջև: Ֆինանսական հոսքերի վերլուծության տեսակետից առկա են որոշակի բարդություններ: Պետական բյուջեով հաստատված << առողջապահության նախարարության ծախսերը ներառում են հոգեկան առողջության խնդիրներ և թմրամիջոցներից, ալկոհոլից կախվածություն ունեցող անձանց բժշկական օգնության և խնամքի գծով պետական պատվերի ֆինանսավորման ծավալները առանձին տողով: Սակայն այս տողը վերաբերում է միայն հիվանդանոցային բուժմանը: Արտահիվանդանոցային ծառայությունների համար նշված ծառայությունների գծով հստակ չի նշվում ծառայությունների ֆինանսավորման համար հատկացված գումարը: Պետական բյուջեում արտացոլվող տեղեկատվությունից անհնար է նաև տեղեկանալ դատարժշկական փորձաքննական ծառայություններին հատկացված ֆինանսական միջոցների մասին: Առողջապահության նախարարության մակարդակով նարկոլոգիական և հոգեբուժական

ծառայությունների մասով որևէ տեղեկատվություն չի հրապարակվում:

Բացակայում է նաև տեղեկատվությունը Պետական առողջապահական գործակալության ինտերնետային կայքում, մինչդեռ այն հանդիսանում է այն մարմինը, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետեւյալ գործառույթներ՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող (այսուհետ՝ բժշկական օգնություն իրականացնող) հիմնարկների ու կազմակերպությունների հետ պետական պատվերի շրջանակներում բնակչությանը բժշկական ծառայությունների մատուցման մասին պայմանագրերի կնքման կազմակերպում, դրանց համապատասխան փաստացի կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ամփոփումը եւ սահմանված կարգով ֆինանսական միջոցների հատկացման ապահովումը,

բ) բժշկական օգնություն իրականացնողների կողմից պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների որակի եւ ծավալի՝ սահմանված չափանիշներին համապատասխան վերահսկումը,

գ) առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման եւ տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների, նորմատիվների, չափանիշների մշակմանն ու ներդրմանը մասնակցությունը:

Հարկ է նշել որ 2007 թ. ներառյալ գործակալությունը իր կայքի միջոցով տրամադրել է տեղեկատվություն նյարդահոգեբուժական բուժիաստատությունների ֆինանսավորման չափերի վերաբերյալ<sup>15</sup>, 2009 եւ 2008 թթ. համար տվյալները բացակայում են:

Ծառայություններ մատուցողների մակարդակում տեղեկատվության հասանելիության մակարդակը առավել ցածր է: Տեղեկատվությունը հասանելի է միայն հարցման հիման վրա<sup>16</sup>, այն էլ ստացված տեղեկատվության հավաստիությունը հնարավոր չէ ստուգել: Նշված ծառայություններ մատուցողները չեն հրապարակում և ոչ մի ֆինանսական հաշվետվություններ, չեն օգտվում տեղեկատվության տարածման միջոցներից: Նշված պայմաններում տեղեկատվության թափանցիկությունը ըստ նրա բաղադրիչների՝ հասանելիություն, հավաստիություն, ժամկետայնություն, անբավարար է:

## **Եզրակացություններ և առաջարկություններ**

Ուսումնասիրելով հոգեբուժական և նարկոլոգիական առողջապահական ծառայությունների պետական ֆինանսավորումը և առկա ֆինանսների պայմաններում մատուցվող առողջապահական ծառայություններ՝ կարելի է եզրահանգել, որ հոգեբուժական և նարկոլոգիական ծառայությունների մատուցման մակարդակը թե՛ քանակական և թե՛ որակական առումներով անբավարար է: Պետական ֆինանսների սղության պայմաններում նյարդահոգեբուժական բուժիաստատություններին հատկացվող գումարները բավարար չեն ծառայությունների անհրաժեշտ որակն ու քանակն ապահովելու համար: Հոգեբուժական և նարկոլոգիական ծառայությունների օրական արժեքը միջինը 5000-6000 դրամ է, ինչը հայաստանյան իրականության համար բավական մեծ գումար է, սակայն ծախսերի անարդյունավետության պատճառով այս գումարները չեն բավարարում: Նշված գումարը տրամադրվում և ծախսվում է մեկ/օր հիվանդի հաշվարկով՝ բուժող և սպասարկող անձնակազմին աշխատավարձի, դեղորայքի, սննդամթերքի, հիգիենայի պարագաների և այլնի վրա: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նշված ուղղություններով ծախսվող գումարների տեսակարար կշիռները զգալիորեն տատանվում են ուսումնասիրված բուժիմնարկների կտրվածքով: Նման հանգամանքը հիմք է տալիս ենթադրել, որ նյարդահոգեբուժական բուժիաստատությունների կողմից ծախսվող միջոցները խիստ անարդյունավետ են:

Ծախսերի արդյունավետության բարձրացմանը չի նպաստում նաև ոլորտի նկատմամբ պետության վերաբերմունքը և քաղաքականությունը: Պետական պատկան մարմինները անհրաժեշտ ուսումնասիրություններ և վերահսկողություն չեն իրականացնում ծառայությունների մատուցման որակի վերաբերյալ, չի կատարվում կարիքների գնահատում, հստակ չեն ծառայությունների հա-

<sup>15</sup> <http://www.pag.am/main.php?lnk=9-4-0>

<sup>16</sup> Նյարդահոգեբուժական բուժիաստատություններից ստացված տեղեկատվությունը կցվում է Հավելվածում

մար սահմանված գները: **Պետության կողմից ոչ պատշաճ վերաբերմունքը հստակ է նաև պետական բյուջեից հատկացվող մեծություններից, որը կախված է պետական բյուջեի մեծությունից, ոչ թե փաստացի անհրաժեշտությունից, ինչը օրենքի պահանջ է:**

Պետական քաղաքականության առումով կարելի է նշել, որ այն կրում է մնացորդային բնույթ: Հոգեբուժական և նարկոլոգիկան ծառայությունները ֆինանսավորվում են առողջապահության այլ ոլորտներին հատկացումներ կատարելուց հետո՝ մնացյալ բյուջեի չափով: Մինչդեռ հանրապետությունում նարկոլոգիական և հոգեբուժական բժշկական օգնության կարիք ունեցող անձանց թիվը ածման միտում ունի:

Ոլորտի առջև ծառացած բազմաթիվ խնդիրներն ու մարտահրավերները փորձվում են լուծվել հնացած մեթոդներով, բացակայում են ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերը:

Ուսումնասիրելով հոգեբուժական և նարկոլոգիական ծառայությունների մատուցման առկա իրավիճակը՝ առաջարկվում է, նախ և առաջ մշակել ոլորտի զարգացման փաստաթղթեր: Հիմնվելով արտասահմանյան պետությունների փորձի վրա՝ անհրաժեշտ է մշակել ծառայությունների տրամադրման այլընտրանքային ձանապարհներ, որոնք հնարավոր կդարձնեն առկա ֆինանսական պայմաններում ֆինանսների արդյունավետության բարձրացման միջոցով մատուցել որակյալ ծառայություններ: Նման այլընտրանքային տարբերակ է նյարդահոգեբուժական բուժհաստատությունների «բեռնաթափումը» ի հաշիվ առողջապահական և սոցիալական ծառայությունների մատուցման հիվանդանոցից դուրս՝ համայնքներում: Նման ծառայությունների առկայությունը զգալի կլրճատի հիվանդանոցներում գտնվող անձանց թիվը, ինչը կնվազեցնի նաև ֆինանսական կարիքները: Խնայողություններ կառաջանան անձնակազմի վարձատրության, սննդի, հիգիենայի և անկողնային պարագաների գծով: Ավելին, ներկայումս նյարդահոգեբուժական բուժհաստատություններում այսպես ասած «բնակվող» անձինք հնարավորություն կստանան կատարել վճարովի աշխատանքներ պետական և մասնավոր հատվածում, ինչը լրացուցիչ եկամուտների աղբյուր կիանդիսանա նրանց կենցաղը հոգալու համար:

Հավելված 1

ԱՎԴԵԲՆԱԾՎՐ ՍՊԻՀՈՒՄՊԵՎԸ ՔՊԻԳԱՆԵՑՄԵՆ ԱՎԴԵԲՆԱԾՎՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
Առողջապահություն, Երևան, Նուբարաշեն 1/3  
„ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԲԺԾԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ”  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

375071 Հայաստանի Հանրապետություն, Երևան, Նուբարաշեն 1/3 Tel: (374 1) 47-53-22  
